Դոկտոր Ռեյմոնդ Սթրայք, Գիտությունների թեկնածու, Թիմի ղեկավար

Ռեյմոնդ Սթրայքը (Ph.D.) իր գործունեության ընթացքում ձեռք է բերել տպավորիչ և հարուստ մասնագիտական փորձ՝ որպես ավագ ղեկավար և սոցիալական աջակցության, բնակարանային քաղաքականության և բնակարանային ֆինանսավորման ոլորտների քաղաքականության վերլուծաբան, ունի քաղաքականության ձևակերպման և ծրագրերի գնահատման մեծ փորձ: Նախագահ Ձիմի Քարտերի պաշտոնավարման ընթացքում պարոն Սթրայքը նշանակվել է ԱՄՆ Բնակարանաշինության և քաղաքաշինության նախարարի օգնական հետազոտությունների և գնահատման գծով, որտեղ նա ղեկավարել է 125 հոգանոց աշխատակազմ, ովքեր ոլորտում աշխատանքային պայմանագրեր են կնքել և իրականացրել են աշխատանքներ: Նա պատասխանատու է եղել իր գրասենյակի կողմից կատարված աշխատանքների քաղաքական հետևանքների մասին Կոնգրեսին և Նախագահի վարչական և բյուջետային վարչությանը տեղեկացնելու համար:

Վերջին 25 տարիների ընթացքում դոկտոր Սթրայքը աշխատել է հետազոտական, վերլուծական կենտրոնների հետ, աջակցել է կառավարման փորձի ամրապնդմանը՝ հետազոտության որակի բարելավման ուղղությամբ և հետազոտության արդյունքների արդյունավետ փոխանցման նպատակով: 1980-ականների կեսերից դոկտոր Սթրայքը աշխատել է ԱՄՆ-ից դուրս, շարունակաբար հետաքրքրված լինելով հանրային քաղաքականության մշակման գործընթացով, մասնավորապես՝ ընդհանուր գործընթացում հետազոտական կենտրոնների դերի ուժեղացմամբ: 1990-ին նա հետաքրքրվեց Արևելյան Եվրոպայով՝ 1992-ի սկզբից ստանձնելով յոթնամյա ռեզիդենտ թիմի ղեկավարի պաշտոնը Մոսկվայում և երկու տարի Հունգարիայում: Նա աջակցություն է ցուցաբերել և խորհրդատվություն տրամադրել նորաստեղծ հետազոտական կենտրոնների համար, ինչպես երկու երկրներում, այնպես էլ ողջ տարածաշրջանում: Դոկտոր Սթրայքը նախկին խորհրդային երկրներում քաղաքականության վրա հետազոտական կենտրոնների ազդեցության մասին 1999թ. հրատարակված գրքի հեղինակն է: 2003-2006թթ. ընթացքում Բոսնիայում և Ադրբեջանում ղեկավարել է հետազոտական կենտրոնների կողմից իրականացվող եռամյա ծրագրերը:

Դոկտոր Սթրայքը անցկացրել է ավելի քան երկու տասնյակ հետազոտական կենտրոնների կառավարման ախտորոշում և պատրաստել հետագա բարելավման ծրագրեր: Նա նաև մշակել և կիրառել է հետազոտական կենտրոնների ուսումնասիրությունների որակի և քաղաքականության վրա վերջիններիս ազդեցության բարձրացմանն ուղղված ծրագրերի գնահատման լիարժեք մեթոդաբանություն: Դոկտոր Սթրայքի այս թեմայով հոդվածները հրապարակվել են տարբեր գրախոսվող ամսագրերում: Ընդհանուր առմամբ, նա հրապարակել է 130 հոդված, իսկև հրատարակել ավելի քան 30 գիրք մի շարք թեմաներով:

2010-ական թվականներին դոկտոր Սթրայքը ղեկավարել է կարողությունների զարգացման երկու խոշոր, բազմամյա ծրագրերի ազդեցության գնահատման աշխատանքները: Ծրագրերում ընդգրկված էին ընդհանուր առմամբ 59 հետազոտական կենտրոններ անցումային և զարգացող 20 երկրներում: Գնահատումների ընթացքում օգտագործվել է նոր մեթոդաբանություն, որի համաձայն արդյունքները օգտագործվել են որպես հիմնական ցուցանիշներ: Դրանք չափվել են կատարված հետազոտության որակի փոփոխությունների (գնահատվել են ներգրավված փորձագետների զեկույցների միջոցով) և քաղաքականության ոլորտում հետազոտական կենտրոնների արդյունավետության

ընկալման հիման վրա (յուրաքանչյուր երկրում քաղաքական համայնքի շուրջ 40 ակտիվ անդամների հարցման միջոցով):

Դոկտոր Սթրայքը շարունակում է կառավարման հարցերին վերաբերող խորհրդատվություն տրամադրել հետազոտական կենտրոններին և նրանց հովանավորներին, մասնավորապես Չինաստանում և շարունակում է իր հրապարակումներն այս ոլորտում: Տարեկան շուրջ մեկ տասնյակ շնորհանդես է անում այս թեմաների շուրջ: Վերջին երեք տարիների ընթացքում նա ամեն տարի երկօրյա սեմինար է անցկացրել Չինաստանի շուրջ 30 հետազոտական կենտրոններիի աշխատակիցների համար՝ Չինաստան-ԱՄՆ գիտահետազոտական ինստիտուտի կողմից կազմակերպված ուսումնական այցի շրջանակներում, որի ընթացքում դասավանդվել են այս թեմաների մեծ մասը: Նա շուրջ 15 անգամ եղել է Policy Fellows Course-ի դասընթացավարներից մեկը:

Բացի այդ, դոկտոր Սթրայքը որոշակի փորձառություն է բերել Հայաստան: 2000-2004թթ. նա աշխատել է «Երկրաշարժի գոտու վերականգնման ծրագրում», սկզբում ծրագրի նախագծի վրա, այնուհետև աջակցելով ծրագրի իրականացմանը և խնդիրների լուծմանը: 2005-2007թթ. IFC և KfW –ի հետ ստորագրված պայմանագրի շրջանակներում նա խորհրդատվություն է տրամադրել Հայաստանում հիփոթեքային շուկայի զարգացման ուղղությամբ: Արդեն 5 տարի է, ինչ նա «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի խորհրդատվական խորհրդի անդամ է: